Վարդան Գառնիկի Մխիթարյան

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» քարտեզի 19 աշխատանքային օրինակների պատճենները և դրա հայերեն տարբերակը

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա

Վարդան Գառնիկի Մխիթարյան

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» քարտեզի 19 աշխատանքային օրինակների պատճենները և դրա հայերեն տարբերակը

Երևան 2020

BOUNDARY BETWEEN TURKEY AND ARMENIA

as proposed by

WOODROW WILSON, President of the United States of America

Prepared under the direction of Major Lawrence Martin, United States U.S. Army

Based on the Turkish Government Map of Asia Minor, the Russian Map of Transcaucasia, the Map of Persia, Map of Mesopotamia, the Map of Syria, Map of Arabia, Map of Palestine, Map of Cyprus, Map of Crete, Map of Egypt, Map of Tripoli, Map of Tunis, Map of Algeria, Map of Morocco, Map of Spain, Map of Portugal, Map of Italy, Map of Sicilia, Map of Sardinia, Map of Corsica, Map of Malta, Map of Balearic Islands, Map of Canary Islands, Map of Madeira, Map of Azores, Map of Cape Verde Islands, Map of Sahara, Map of Sudan, Map of Abyssinia, Map of Somaliland, Map of Eritrea

«ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇՎԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ» ՔԱՐՏԵԶԻ 19 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

2019 թ. թուրք-ամերիկյան լարված հարաբերություններով պայմանավորված՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում տեղի ունեցան քվեարկություններ, և հոկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի, իսկ դեկտեմբերի 12-ին նաև Սենատի կողմից ընդունվեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող երկու բանաձևեր: Հավելենք, որ ընդունված այս երկու բանաձևերը միմյանցից անկախ էին, օրենքի ուժ չունեին, և ըստ ընթացակարգի՝ չէին պահանջում ԱՄՆ-ի նախագահի ստորագրությունը:

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած «Հաստատելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ Միացյալ Նահանգների արձանագրությունները» (Affirming the United States Rեecord on the Armenian Genocide) փաստաթղթում, ի թիվս այլոց, տեղ է գտել նաև հետևյալ պարբերությունը, ուր հիշատակվում է Վուդրո Վիլսոնի անունը. «… Նախագահ Վուդրո Վիլսոնը խրախուսել է «Մերձավոր Արևելքի նպաստամատույց» կազմակերպության ձևավորումը, որը հաստատվել է Կոնգրեսի ակտով և որը 1915-1930 թթ. ընթացքում հավաքել է 116.000.000 դոլար (2019 թ. արժեքով՝ ավելի քան 2.500.000.000 ԱՄՆ դոլար), և Սենատն ընդունել է այս կոտորածները դատապարտող բանաձևեր …»[1]:

Հայտնի է, որ Վուդրո Վիլսոնի՝ ԱՄՆ-ի 28-րդ նախագահի (1913-1921) անունն անմիջականորեն կապվում է ոչ միայն

---

[1] Տե՛ս Թաթոյան Ռ., ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, բանաձևի անգլերեն բնագրից (ոչ պաշտոնական) թարգմանություն, 2019 // https://armenpress.am/arm/news/993429.html (հասանելի էր 23.08.2020):

Վուդրո Թոմաս Վիլսոն (1856-1924)
ԱՄՆ 28-րդ նախագահ (1913-1921)
Խաղաղության Նոբելյան մրցանակի
դափնեկիր (1919)

Հայոց ցեղասպանության ընթացքում նրա ցուցաբերած վերոբերյալ գործունեության, այլև, Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված նոր աշխարհակարգի ձևավորման, մասնավորապես Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանին վերաբերող Իրավարար վճռի հետ:

Քանի որ մեր դիտարկմանը ենթակա միակ հարցը 1920 թ. Վուդրո Վիլսոնի կողմից հաստատված «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» վերտառությամբ քարտեզն է, ուստի նպատակահարմար ենք գտնում շատ ընդհանրացված անդրադառնալ դրա կազմման հարցի նախապատմությանը:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրությունը Առաջին աշխարհամարտում պարտություն կրելուց (անվերապահ կապիտուլյացիայից) հետո ստորագրում է Մուդրոսի զինադադարը: Թուրքիայի ամբողջ ինքնիշխանությունը մինչև խաղաղության պայմանագրի կնքումը փոխանցվում է հաղթանակած դաշնակից ուժերին՝ Անտանտի երկրներին:

Հաղթանակած պետությունները պարտվածների հետ հաշտության պայմանագրեր կազմելու և ստորագրելու նպատակով հրավիրում են Փարիզի խաղաղության վեհաժողովը (1919-1920 թթ.): Արդյունքում՝ խաղաղության պայմանագրեր կնքվեցին Գերմանիայի (Վերսալի պայմանագիր, 1919 թ.), Ավստրիայի (Սեն Ժերմենի պայմանագիր, 1919 թ.), Բուլղարիայի (Նեյիի պայմանագիր, 1919 թ.), Հունգարիայի (Տրիանոնի պայմանագիր, 1920 թ.) և Օսմանյան կայսրության (Սևրի պայմանագիր, 1920 թ.) հետ,

որոնք դարձան ձևավորվող Վերսալ-Վաշինգտոնյան հետպատերազմյան համակարգի հենքը: Վերոհիշյալ պայմանագրերի կնքումից զատ, վեհաժողովի որոշմամբ ստեղծվեց նաև Ազգերի լիգան (1920-1946 թթ.)՝ առաջին միջազգային կազմակերպությունը, որի նպատակներն էին խաղաղության պահպանումը և միջազգային համագործակցության զարգացումը:

Փարիզի խաղաղության վեհաժողովի Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 19-ին, հանձինս Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի և Իտալիայի, ճանաչեց Հայաստանի առաջին հանրապետությունը որոշակի պայմանով, այն է՝ նրա սահմանները պետք է որոշվեին հետագայում: Նույն պայմանով՝ 1920 թ. ապրիլի 23-ին Հայաստանի առաջին հանրապետությունը ճանաչեց նաև ԱՄՆ-ը[2]:

1920 թ. ապրիլի 19-ից 26-ը Սան Ռեմոյում տեղի ունեցած կոնֆերանսն անդրադառնում է Օսմանյան կայսրության ճակատագրին: Բնականաբար, քննարկվող կարևորագույն հարցերից մեկը նվիրված էր Հայաստանի Հանրապետության պետական սահմանների հետագա ճշգրտմանը: Դաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը (Supreme Council of Allied and Associated Powers)՝ բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, ապրիլի 26-ին պաշտոնապես դիմում է Վուդրո Վիլսոնին՝ հայ-թուրքական սահմանն Իրավարար վճռով որոշելու համար[3]: Այս խնդրանքն ամրագրվում է նաև խաղաղության վեհաժողովի նախագահի՝

---

[2] Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրություն հայոց, պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 60, 221, Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, v. III, Washington, 1936, p. 778, Lauterpacht H. Recognition in International Law, Cambridge, 1947, p. 11: Ի տարբերություն Հայաստանի առաջին հանրապետության՝ ԱՄՆ-ը երբեք չի ճանաչել Վրաստանի և Ադրբեջանի առաջին հանրապետությունների անկախությունը:

[3] Տե՛ս Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia, App I, № 10, (The National Archives, Washington, 760J.6715-760J.90C/7) // The Treaties of Peace, 1919-1923, vol. I., NY, 1924, p. XXXII:

Ֆրանսիայի վարչապետ և արտգործնախարար Ալեքսանդր Միլերանի 1920 թ. ապրիլի 27-ի պաշտոնագրով[4]:

1920 թ. մայիսի 17-ին Վուդրո Վիլսոնը ստանձնում է հայ-թուրքական սահմանի վերաբերյալ իրավարարությունը[5]: Նույն թվականի օգոստոսի 10-ին Փարիզում ընթացող բանակցություններում, Սևրի պայմանագրի այլ կետերից զատ, քննարկվում է նաև վերոհիշյալ սահմանային խնդիրը: Ի թիվս Հայաստանի և Թուրքիայի, ևս շուրջ երկու տասնյակ մասնակից երկրների ներկայացուցիչներ դիմում են ԱՄՆ-ի նախագահին, որպեսզի նա ի կատար ածի ստանձնած հայ-թուրքական սահմանի իրավարարության վերաբերյալ հանձնառությունը: Այսպիսով, այդ դիմումը ներառվում է պայմանագրում 89-րդ հոդվածի տեսքով: Իսկ նույն պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան վերահաստատում է իր դիրքորոշումը՝ ամրագրելով, որ, «սկսած իրավարար որոշման օրից, Թուրքիան հրաժարվում է [Հայաստանին] փոխանցվելիք տարածքի նկատմամբ իր բոլոր իրավունքներից և տիտղոսից»[6]:

Հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Իրավարար վճիռը կայացնելու նպատակով ԱՄՆ-ի կառավարությունում, պետական իրավասու մարմինների և պրոֆեսոր Վիլյամ Վեստերմանի մասնակցությամբ, ստեղծվում են հատուկ մասնագիտական խմբեր: Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունում փորձագիտական ուսումնասիրությունների հիման վրա նյութեր են մշակվում սահմանանշող հանձնաժողովի համար: Հանրագումարում, հիմք ընդունելով կատարած մեծածավալ հետազոտությունների արդյունքները, Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումն իրականացվել է Օսմանյան կայսրության գլխավոր շտաբի՝ 19 մասից բաղկացած

---

[4] Տե՛ս Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, Washington, 1936, v. III, p. 780:

[5] Տե՛ս Պապյան Ա., նշվ. աշխ., էջ 100:

[6] Տե՛ս Հակոբյան Ա., Հայկական հարցը Փարիզի խաղաղության կոնֆերանսում, 2018: // https://old.arfd.am/?p=44140 (հասանելի էր 23.08.2020), Պապյան Ա., նշվ. աշխ., էջ 23:

աշխատանքային քարտեզների հիման վրա: Կազմված քարտեզ-ների շարքը կրում է «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» (Մասշտաբ 1:200.000) խորագիրը[7]:

Քարտեզագրման աշխատանքների կազմակերպման հաջորդ փուլում, հենվելով վերոհիշյալ աշխատանքների վրա, մասնա-գետների կողմից կազմվում է մեկ այլ՝ ընդհանուր քարտեզ (Մասշտաբ 1:1.000.000), ուր արտացոլված է վերոբերյալ 19 քարտեզների համապատասխան բովանդակությունը: Այն մեզ բոլորիս քաջ ծանոթ և շուրջ 100 տարի շրջանառվող համանուն քարտեզն է[8]:

1920 թ. նոյեմբերի 22-ին Վուդրո Վիլսոնը և ԱՄՆ-ի պետքարտուղար Բեյնբրիջ Քոլբին իրենց ստորագրություններով և ԱՄՆ-ի Մեծ կնիքով (The Great Seal of the United States) վավերացրել են Վիլսոնի Իրավարար վճիռը՝ այն դարձնելով նաև ԱՄՆ-ի ներքին օրենսդրության մաս (the law of the land): Իսկ երկու օր անց՝ նոյեմբերի 24-ին, նյութերը պաշտոնական հեռա-գրով փոխանցել են Փարիզ: Իրավարար վճռի առարկայական փոխանցումը դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին՝ Փարիզ, կայացել է 1920 թ. դեկտեմբերի 6-ին[9]:

Սույն վճռի պաշտոնական և ամբողջական անվանումն է. «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»: Ըստ Իրավա-

---

[7] Տե՛ս Boundary between Turkey and Armenia, as Determined by Woodrow Wilson President of the United States of America (Scale 1:200.000).
Maps surveyed by the Turkish General Staff, between 1911 and the date of the armistice and printed in the cartographic establishments in Constantinople and Kutaya, in the Turkish financial years 1330 to 1333 (1914 to 1917):

[8] Տե՛ս Boundary between Turkey and Armenia, as Determined by Woodrow Wilson President of the United States of America (Scale 1:1.000.000):

[9] Տե՛ս Պապյան Ա., նշվ. աշխ., էջ 223: //
https://armenpress.am/arm/news/437515/www.idealsystem.am (հասանելի էր 23.08. 2020):

բար վճռի՝ Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների վրա՝ ներառելով շուրջ 103.599 կմ² տարածք:

Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը պարտադիր է Առաջին աշխարհամարտում պարտված երկրների համար և անբեկանելի ու անժամանցելի է ԱՄՆ-ի համար, քանի որ այն կնքված է ԱՄՆ-ի պետության Մեծ կնիքով:

Ամփոփելով՝ կարելի է ընդգծել հետևյալը.

1. Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության սահմանի Իրավարար վճիռը կայացվել է երկու՝ միմյանցից անկախ հայցադիմումների (Սան Ռեմոյի՝ 26.04.1920 թ. և Սևրի՝ 10.08.1920 թ.) հիման վրա:

2. Սևրի պայմանագրի և Իրավարար վճռի առանձին և անկախ փաստաթղթեր լինելու մասին դեռևս 1926 թ. միանշանակորեն գրել է 1913-1917 թթ. Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան, իրավագետ Ջեյմս Վաթսոն Ջերարդը[10]:

3. Վճիռն օրինապես կայացվել է 1920 թ. նոյեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել նույն օրը[11]:

4. 1920 թ. նոյեմբերի 22-ից ի վեր նախկինում Օսմանյան կայսրության մաս կազմող Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների նկատմամբ (շուրջ 103.599 կմ² տարածք) չեղյալ են հայտարարվել թուրքական իրավունքներն ու տիտղոսը, փոխարենը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության իրավունքներն ու տիտղոսը:

5. Վճիռը երբեք չի բողոքարկվել, և այն ուժի մեջ է առ այսօր:

Աշխատելով Ֆրանսիայի գրադարաններում և արխիվներում՝ մեզ հաջողվել է ստանալ այնտեղ պահ տրված

---

[10] Տե՛ս James W. Gerard, Armenia, Russia and the Lausanne Treaty, p. 166. In the book: The Lausanne Treaty, Turkey and Armenia, NY, 1926.

[11] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, ժողովածուն կազմել են Ջ. Ս. Կիրակոսյանը, Ռ. Գ. Սահակյանը, Երևան, 1972, Պապյան Ա., նշվ. աշխ., էջ 60:

աշխատանքային քարտեզների (19 մասից բաղկացած քարտեզների շարքի)՝ «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» (Մասշտաբ 1:200.000) խորագիրը կրող պատճենները, որոնք կազմվել էին ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության և փորձագետների համատեղ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: Ամենայն հավանականությամբ, դրանք ԱՄՆ-ի կառավարության կողմից դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդ՝ Փարիզ են փոխանցվել Իրավարար վճռի հետ միասին (06.12.1920 թ.):

Այդ աշխատանքային քարտեզների պատճենները տեղ են գտել սույն հոդվածում (տե՛ս Տիտղոսաթերթը, 1-19 քարտեզները):

Ինչ վերաբերում է հրատարակված և շրջանառվող «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» (Մասշտաբ 1:1.000.000) խորագիրը կրող քարտեզին, ապա ափսոսանքով պետք է նշենք, որ անցած 100 տարիների ընթացքում մեզ համար այդչափ կարևոր այդ քարտեզը հայերեն լեզվով չի հրատարակվել: Այդ իսկ պատճառով որոշեցինք շտկել առկա բացթողումը և ստորև հրատարակել նաև հայերեն տառադարձությամբ կազմված վերոհիշյալ քարտեզը (տե՛ս Բ. Հարությունյան, Մ. Մխիթարյան, քարտեզի հայերեն տարբերակը)[12]:

Քարտեզի հայերեն տարբերակում, որտեղ նրա բովանդակային ծանրաբեռնվածությունը թույլ է տվել, օտարահնչյուն

[12] «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» (Մասշտաբ 1:1.000.000): Քարտեզի լեգենդում նշված է. «Քարտեզը կազմվել է մայոր Լոուրենս Մարտինի ղեկավարությամբ, Մ. Ն. բանակի գլխավոր շտաբի, Մ. Ն. երկրաբանական ծառայության տեղագրական (տոպոգրաֆիական) մասնաճյուղի կողմից՝ պետական դեպարտամենտի հետ համագործակցությամբ, ըստ Հարբորդի առաքելության դիտարկումների և Թուրքիայի գլխավոր շտաբի 1:200.000 մասշտաբի, պատերազմի ընթացքում 1:400.000 մասշտաբի գերմանական քարտեզների և պարսկական ու անդրկովկասյան տարածքի 1:1.000.000 մասշտաբի բրիտանական քարտեզների»:

տեղանուններին և աշխարհագրական անվանումներին զուգա-հեռ՝ [] ուղիղ փակագծերում, հավելել ենք դրանց իրական՝ հայկական տարբերակը. օրինակ՝ Էրզրում [Կարին], կամ հայերենում ընդունված արտասանման ձևը. օրինակ՝ Կարա Քիլիսա [Ղարաքիլիսա]:

Հուսով ենք, որ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը կայաց-նելու նպատակով կազմված և Փարիզում (ուր կազմակերպվել է Խաղաղության կոնֆերանսը) պահ տրված 19 աշխատանքային քարտեզների պատճենների (Մասշտաբ 1:200.000) և հայերեն տառադարձությամբ հիմնական (մեկ ընդհանուր քարտեզի) քարտեզի հրատարակումը (Մասշտաբ 1:1.000.000) խթան կհանդիսանան ու կնպաստեն Իրավարար վճիռը հանրայնաց-նելու գործին:

BOUNDARY

BETWEEN

TURKEY AND ARMENIA

AS DETERMINED BY

WOODROW WILSON
PRESIDENT OF THE UNITED STATES OF AMERICA

Scale 1: 200,000

5 0 5 10 Kilometers

5 0 5 10 Miles

Contour interval 50 meters

Datum is mean sea level

1920

Boundary between Turkey and Armenia

Vilayet boundaries

Sandjak boundaries

Kaza boundaries

Village used in location of new international boundary

Maps surveyed by the Turkish General Staff, between 1911 and the date of the armistice and printed in the cartographic establishments in Constantinople and Kutaya, in the Turkish financial years 1330 to 1333 (1914 to 1917)




PERSIA
Kotur
Kara Hissa
VAN SANDJAK
HAKKIARI
SANDJAK
KAZA
MAMURET-UL-HAMID KAZA
ELBACK
Great Zab River
Zap Su
PERSIA


Khoshab
KrdesGedik
ChokhGedik
Khoshab Su
MAMURET-UL-HAMID KAZA
ELBACK KAZA
HAKKIARI SANDJAK
VAN SANDJAK
VAN SANDJAK
HAKKIARI SANDJAK
Bashkala
YokaryAhvalan
Shkolans Dagh 3100
3350
Merkezer Dagh
Sharak Su

Su
Khoshab
Belereshuk
Pass
Dir Mouem Kilisa
Klesiry Dagh
Sari Dagh
3150
Eyreti
Araz
Koh
Kiran Daghlar
Shatak
Su

Lake Van
Shatak
3500 Kevmetala Tepe
3550 Arnus Dagh
Sinpass
Unnamed Peak
3540
Kachet
Kanisor 3245 Tepe
Shatak SU


Lake
Van
Lake
Van
VAN VILAYET
BITLIS VILAYET
Veberhan Dagh
3110
Unnamed Peak
Sorsy
Moks
Moks Su
Mata Gedik
Vankin Dagh
3200
3000
Ozim
Unnamed Peak


2700
Kur Dagh
2750
Meidan
Chenidrani
Chopans
Khoros
Nevaleyno
Semhaj
BITLIS
SAIRT
SANDJAK
SANDJAK
Dere
Kesan

BITLIS
Su
Bitlis
Kalmen Dagh
2710
2150 Nuri Ser
Guzel Dere Su
Deshtumi
Darum
Enbu
Lered
Sihaser Tepe
2250
1850 Mergelu
Tepe
2230
Biluki Dagh

D.AGH
Malato Dagh
2967
Unnamed Peak
SASSUN
Kabil
Jeviz
2229
1931
Keupeka
2001
Cheyardash
1944
Zily
Shefash
Dagh
Avesipy
Hazo
Zuk (Gharzan) Su


Pelekoz
Komiss Dagh
Askar Dere
Boghazy
Kehirvanik
Kulp
Helin
2251
Dere
Kasser
Heyshtirem
2073
Talury
Seyluk
Unnamed Peak
Gundenu
Dere
Sassun


2050
Erchek
Elmaly
Su
2200
Chenajky
Gumik
Lichnak
Kumistan
Unnamed Peak
Solkhan Dagh
Shanghar or
Euphrates)
Dorne
(Murad Su
FRAT NEHRI
Arshik Dagh
Ardushin
Hadije Tepe
Chutela (Akche Kara) Dagh
Kulay
Kluhuran
2940
Unnamed Peak
SANDJAK
SANDJAK
Mir Ismail Dagh
GENDJ
MUSH

Sheitan Dagh
2906
SHEITAN DAGHLAR
2610
Unnamed Peak
Chorlis Dagh
2797
Kartalik Tepe
VILAYET
VILAYET
ERZERUM
BITLIS
Agha Kevi
Unnamed Peak

Ghabarti Dagh
2550
Shorakh
Dinek
Ghabzu Dere
Hakstun Dagh
Kigh
Su
Buyuk


ERZINGAN SANDJAK
Karasu or Euphrates
Unnamed Peak
ERZERUM SANDJAK
Chardaklar (Palumor)
Unnamed Peak
Silos Dagh 2405
Ferhadin
2035
2750 Sian Dagh
2244
2150
2530
Mustafa Bey Konaghy
Feziria Tepe
Boghaz
Dar


ERZINGAN
Kara Su or Euphrates
ERZERUM VILAYET
KEMAKH KAZA
ERZINGAN KAZA
Merjan Daghlar
3449
Unnamed Peak
3100
Kaleh
Karaja
Katar Tepe 3300
SILSILESI
MONZUR
ERZINGAN SANDJAK
ERZERUM SANDJAK
DERSIM SANDJAK
MAMURET UL AZIZ VILAYET


3030
Kehnam Dagh
Kelek Kiran
(Tekke Tash)
2800
Utch Kardash Tepe
Erkghan
Toms
Chalaby Yady
Koja Arbler
Kemakh
EUPHRATES
FRAT NEHRI (KARA SU OR
ERZERUM VILAYET
Unnamed Peak
SILSILESI
MONZUR
DERSIM SANDJAK
MAMURET UL AZIZ VILAYET
Pelur

Kirtanos
Kiliktin
Chai
Shiran
Sinanli
Kar
Kishla
Halkit
Kelkit
Chai
SIVAS
VILAYET
Kara Yayrak
TREBIZOND VILAYET
ERZERUM VILAYET
Metkut
2930
Kuchi Keui
Ixy
Chimen
Dagh
Sivry
Kara
Dagh
2740
2760
Kral Khani Boghazy
Chardakli
Kirmana
Alamlik
Zazker


Barsak
Dere
Ara
SIVAS VILAYET
TREBIZOND VILAYET
Kara
Kia
K.Sadik
SIVAS VILAYET
ERZERUM VILAYET


Karshut Su
TREBIZOND VILAYET
SIVAS VILAYET
2919
Giaour Dagh
Barsak Dere
Borgha Paya
2995
Unnamed Peak
TREBIZOND VILAYET

BLACK SEA
Kerasun
Keshab
Dere
Dere
Yenaz
Yaghai
Kara Tepe
1696
Komit
Dere
TREBOLU
KERASUN
KAZA
KAZA
TREBIZOND
VILAYET
Unnamed Peak
SIVAS
VILAYET
2690 Yerchi Tepe

Մ Ա Ր Մ Ա Ր Ա
Ս Ա Ն Ջ Ա Կ
ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԻՐԻԱ
ՄԱՄՈՒՐԵԹ-ՈՒԼ-ԱԶԻԶ
ՄԻՋԵԱԳԵՏՔ
ՄՈՍՈՒԼ
ՎԱՆ ԼԻՄ
ՄԵՎ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ԹԻՖԼԻՍ
ԲԱԹՈՒՄ
ՍՈՉԻ
ԵՎՐՈՊԱ
ԱՍԻԱ
ԱՖՐԻԿԱ
ՍԱՀԱՐԱ
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ԵԳԻՊՏՈՍ
ԿԱՐՄԻՐ ԼԵՌՆԵՐ
ԱՐՄԱՎԻՐ
ԱՐԱՐԱՏ
ԱԼԱՇԿԵՐՏ
ԱՐԱՔԱԾ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՍԵՎԱՆ
ՍԱՄՍՈՆ
ԵՐԵՎԱՆ
ԳՅՈՒՄՐԻ
ՎԱՆԱՁՈՐ
ԷՋՄԻԱԾԻՆ
ՍԱՐԱՏՈՎ
ՎՈԼԳԱ
ԿԱՍՊԻ ԾՈՎ
ՍԱՐԱՏՈՎ
ՎՈԼԳՈԳՐԱԴ
ԴԻԱՐԲԵՔԻՐ
ՄՈՍՈՒԼ
ՍԻՐԻԱ
ՄԻՋԱԳԵՏՔ
ՍԻՐԻԱ
ՄՈՍՈՒԼ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԻՐԻԱ
ՄԻՋԵՐԿՐՅԱ ԾՈՎ
ԵԳԻՊՏՈՍ
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» քարտեզի 19 աշխատանքային օրինակների պատճենները և դրա հայերեն տարբերակը

Աշխատանքը հրատարակության է նախապատրաստվել
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ

Հեղինակ՝
Վարդան Գառնիկի Մխիթարյան

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից» քարտեզը հայերեն տառադարձությամբ կազմեցին՝
Բ. Հ. Հարությունյան, Վ. Գ. Մխիթարյան

Կազմը ձևավորեց՝
Վ. Գ. Մխիթարյան

Հրատ. խմբագիր՝
Գ. Ե. Ռաֆայելյան

© Մխիթարյան Վ. Գ.
Mkhitaryan V. G.

ISBN 978-9939-0-3457-7

© Հեղինակային հրատարակություն, Երևան, 2020

ISBN 978-9939-0-3457-7

9 789939 034577